

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ

### Գոռ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դատավարության  
ամբիոնի ասպիրանտ

Բնական ռեսուրսների պետական կառավարման գործընթացում ընդունվող որոշումների տեղեկատվական ապահովումը գերազանցապես իրականացվում է բնական ռեսուրսների մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման գործառույթների միջոցով: Այս գործառույթների իրականացմամբ ձեռք է բերվում տեղեկատվություն բնական ռեսուրսների կառավարման սուբյեկտի կողմից կառավարման օբյեկտի վրա ունեցած ազդեցության վերաբերյալ: Եթե կառավարվող օբյեկտի վարքագծում չեն կատարվել անհրաժեշտ փոփոխություններ, ապա կառավարող սուբյեկտը պետք է ընդունի նոր որոշում՝ փոփոխություններն ապահովելու նպատակով: Այսպիսի մեխանիզմի կիրառումը սուբյեկտի և օբյեկտի միջև ստեղծում է հետադարձ կապ կառավարման գործընթացում:

Կատարելով գործառույթումներ տեղեկատվության հետ՝ սոցիալական կառավարման սուբյեկտն ըստ էության իրականացնում է կառավարման էությունը՝ տրամաբանորեն միմյանց հաջորդող կառավարչական որոշումների ընդունումը և կատարումը: Որոշումների ընդունման փուլում կարևորվում է խնդրահարույց իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ եզրափակիչ փուլում՝ կառավարչական որոշումների կատարման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը<sup>1</sup>: Այսինքն, նախապես *վեր են հանվում* այդ որոշումների ընդունումը պայամանավորող պայմանները, գործոնները, պատճառները,

*ուսումնասիրվում են* որոշակի ռեսուրսներ հիմնախնդրի լուծումն այլ հարթություն տեղափոխելու նպատակով, *դիտարկվում են* այլընտրանքներ, որից հետո միայն ընդունվում են համապատասխան որոշումներ: Որոշման ընդունման հաջորդող փուլում դրա դրույթները տարածվում են սուբյեկտների վարքագծի վրա, իրականացվում են այդ դրույթների վերաբերյալ նրանց իրագրելում, օպերատիվ վերահսկողություն և որոշումների կատարման արդյունքների անընդհատ ամփոփում<sup>2</sup>:

Տեխնոլոգիաների զարգացման արդի պայմաններում բնական ռեսուրսների մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման համակարգի ձևավորումը լիովին իրատեսական է: Չնայած այդ համակարգերը սկսել են ձևավորվել ոչ վաղ անցյալում (1980-ական թվականներից սկսած), ներկայումս ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայի պետություններում գոյություն ունեն բնական ռեսուրսների պետական մոնիթորինգի՝ աշխարհում ամենաընդարձակ համակարգերը:

### **Բնական ռեսուրսների մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման բնույթը**

Մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման գործառույթների միջև կապը տրվեց հողվածի ներածությունում: Դրանց հիմնական տարբերությունները հնարավոր է ներկայացնել հետևյալ երկու կետի շրջանակում.

1. Եթե բնական ռեսուրսների մոնիթորինգի շնորհիվ ստացվում է տեղեկատվություն բնական ռեսուրսի քանակական և որակական հատկանիշների մասին, ապա կադաստրի արդյունքում ձեռք բերվող տեղեկատվությունը վերաբերում է ռեսուրսի տնտեսական, իրավական, էկոլոգիական բնութագրերին:

## **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ**

### **ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

2. Վիճակագրական հաշվառումը արդեն ձևավորված տվյալների և չափանիշների հիման վրա բնական ռեսուրսների վիճակի մասին որոշակի մեթոդներով տեղեկատվության ձևավորումն է:

Թերևս սրանք այն բացառիկ ինստիտուտներից են, որոնց բնորոշումները մասնագիտական գրականությունում գրեթե միատեսակ են: Բնական ռեսուրսների մոնիթորինգի վերաբերյալ ռուսական իրավաբանական գրականությունում տեղ գտած բնորոշումները կարևոր դրույթներ են պարունակում: Այսպես, շրջակա միջավայրի մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի բաղադրամասերի և դրանց ինդիկատորների (օրինակ՝ հողային ռեսուրսների պարագայում՝ հողի էրոզացված լինելը, աղակալվածությունը, արտադրողականությունը և այլն) բնույթը և դրանց փոփոխականությունը տարածության ու ժամանակի մեջ որոշելու նպատակով, որն իրականացվում է հետևյալ խնդիրները լուծելով.

- շրջակա միջավայրում տեղի ունեցող գործընթացների ընկալում,
- շրջակա միջավայրին սպառնացող վտանգի կանխարգելում,
- աջակցություն վերականգնվող և չվերականգնվող բնական ռեսուրսների օգտագործման օպտիմալացմանը,
- աջակցություն կարգավորիչ գործընթացներին (օրինակ՝ այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը կօգտագործվի դատարաններում կամ այլ պետական մարմիններում՝ վեր հանելու որոշակի գործունեության անհամապատասխանությունն էկոլոգիական օրենսդրության պահանջներին<sup>3)</sup>:

Բնական ռեսուրսների օբյեկտիվ դիտարկումների շնորհիվ ձեռք են բերվում հիմնավոր տվյալներ, որոնք բնութագրում են շրջակա միջավայրում տեղի ունեցող քիմիական, ֆիզիկական և կենսաբանա-

կան գործընթացները<sup>4)</sup>: Այն բացահայտում է նաև մարդու կենսագործունեության և շրջակա միջավայրում տեղի ունեցող գործընթացների պատճառահետևանքային կապը<sup>5)</sup>: Այսպիսի տեղեկատվության հիման վրա ձևավորվող իմացությունը հնարավորություն են ընձեռում ավելի ճիշտ հասկանալու գոյություն ունեցող հիմնախնդիրը՝ նպաստելով տեղեկացված որոշումների ընդունմանը:

Կառավարման այս գործառնությունների իրականացմամբ երաշխավորվում է նաև մարդու՝ էկոլոգիական տեղեկատվություն ստանալու իրավունքը<sup>6)</sup>:

*Ըստ Օ. Լ. Դուբովիկի*<sup>7)</sup> էկոլոգիական մոնիթորինգը շրջակա միջավայրի վիճակի, դրանում կատարվող փոփոխությունների և դրանց հետևանքների, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար հնարավոր վտանգ ներակայացնող գործունեության տեսակների, արտադրությունների և այլ օբյեկտների դիտարկումն իրականացնող կազմակերպական միավորների և դիտարկումների մեթոդների, միջոցների ամբողջություն է<sup>8)</sup>:

*Ս. Ս. Բրինչուկը* մոնիթորինգը բնորոշում է որպես շրջակա միջավայրի և դրա փոփոխությունների վիճակի երկարաժամկետ դիտարկումների, զնահատումների և կանխատեսումների համակարգ<sup>9)</sup>:

Շրջակա միջավայրի մոնիթորինգի վերաբերյալ գոյություն ունեցող մի շարք այլ բնորոշումների ուսումնասիրությունից հետևում է, որ դրանք էականորեն չեն տարբերվում միմյանցից: Հիմք ընդունելով վերոգրյալ բնորոշումները, ինչպես նաև Հայաստանում մոնիթորինգի օրենսդրական կարգավորման փորձը՝ առաջարկում ենք բնական ռեսուրսների պետական մոնիթորինգի հետևյալ բնորոշումը. *բնական ռեսուրսների պետական մոնիթորինգը ռեսուրսների վիճակի (քանակի, որակի, այդ թվում նաև՝ աղտոտվածության և այլ բացասական ազդեցությունների) կանոնավոր և անընդհատ դիտարկումների, վերլուծությունների, զնահատումների և կանխա-*

տեսուների համակարգ է, որն ապահովում է բնական ռեսուրսների վերաբերյալ արժանահավատ, բազմակողմանի տեղեկատվության ստացում:

### **Իրավական կարգավորման հիմքերը**

Հայաստանի Հանրապետությունում մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման իրավական հիմքերը ավելի հետևողականորեն ձևավորվում են վերջին հինգ-վեց տարիների ընթացքում:

Բնական ռեսուրսների պետական մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման վերաբերյալ դրույթներն տեղ են գտել ՀՀ Անտառային օրենսգրքում<sup>9</sup> (3-րդ, 7-րդ, 16-րդ, 17-րդ հոդվածներ), Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենքում<sup>10</sup> (1-ին, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ հոդվածներ), Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքում<sup>11</sup> (1-ին, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածներ), Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքում<sup>12</sup> (8-րդ, 9-րդ, 14-րդ, 15-րդ հոդվածներ), ՀՀ հողային օրենսգրքում<sup>13</sup> (31-րդ, 32-րդ, 33-րդ հոդվածներ), ՀՀ ջրային օրենսգրքում<sup>14</sup> (1-ին, 10-րդ, 19-րդ հոդվածներ), ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում<sup>15</sup> (2-րդ, 17-րդ, 18-րդ հոդվածներ), «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում<sup>16</sup> (15-րդ, 36-րդ, 37-րդ հոդվածներ) և «Հիդրոդերևույթաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքում<sup>17</sup> (2-րդ, 12-րդ, 23-րդ հոդվածներ):

ՀՀ կառավարությունը 2007 թվականի փետրվարի 15-ին ընդունել է որոշում «ՀՀ-ում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների 2007-2011 թվականների ծրագիրը հաստատելու մասին»<sup>18</sup> (այսուհետ՝ Ծրագիր)՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի նիստի արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի հայեցակարգը: Քանի որ լրացել են խնդիրների իրականացման՝ կառավարության որոշմամբ սահմանված վերջնաժամկետները, կարող ենք գնահատել նաև նախատեսված միջոցառումների

իրականացման արդյունավետության աստիճանը:

Ծրագրի հաստատմանը հաջորդեց որոշ բնական ռեսուրսների (անտառներ, կենդանական և բուսական աշխարհ, հողեր) մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման կարգերը սահմանող ՀՀ կառավարության որոշումների ընդունումը (օրինակ՝ «Անտառային պետական կադաստրի վարման և անտառների պետական հաշվառման ու տվյալների տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 133-Ն որոշում<sup>19</sup>, «Բուսական աշխարհի մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 120-Ն որոշում<sup>20</sup> և այլն)<sup>21</sup>: Իրավական հիմքերի կատարելագործումից բացի՝ Ծրագրով նախատեսված են նաև առանձին ռեսուրսների մոնիթորինգի համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներ. օրինակ՝ կենսաբազմազանության մոնիթորինգի տվյալների բազայի ստեղծում երկրատեղեկատվական համակարգերի ներդրմամբ կամ շրջակա միջավայրի մոնիթորինգի չափագիտական ապահովվածություն:

Վերոգրյալ իրավական ակտերի դրույթներից ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ ենք համարում ընդգծել հետևյալ հիմնախնդիրները.

1. Իրավական ակտերում բացակայում են մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման միասնական բնորոշումներ: Դրանք կարող են տարբերվել՝ պայմանավորված բնական օբյեկտով, սակայն պետք է բանաձևեն մոնիթորինգը որպես որոշակի գործընթաց, որպես հաջորդական գործողությունների ամբողջություն:

2. Մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման վերաբերյալ դրույթների գործնական կիրառումը կարող է խոչընդոտներ առաջացնել, քանի որ դրանք չեն ամրագրում պատշաճ մեխանիզմներ և միջոցներ (այսպիսի կարգավորումը պայմանավորում ենք նաև էմպիրիկ ոլորտի թերզարգացվածությամբ):

## **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ**

### **ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

3. Գիտականորեն հիմնավորված չէ և ՀՀ Սահմանադրությունից չի բխում նաև ՀՀ կառավարության որոշումների և բնառեսուրսային օրենսդրական ակտերի փոխհարաբերման ներկայիս վիճակը: Կառավարության որոշումները կարգավորում են հասարակական հարաբերություններ, որոնք պետք է լինեն միայն օրենքի կարգավորման առարկա:

4. Ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության N 191-Ն որոշմամբ նախատեսված մի շարք իրավական ակտեր այդպես էլ չեն ընդունվել (օրինակ՝ կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ստեղծման չափորոշիչները, մակերևութային ջրերի ֆոնային աղտոտվածության ազդեցության հետևանքների գնահատման մեթոդիկան, մոնիթորինգային տվյալների ներկայացուցչության ապահովման ծրագրային փաթեթը և այլ իրավական ակտեր):

#### ***Մոնիթորինգը, կադաստրը և հաշվառումը գործնականում***

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կառավարման ոլորտում գտնվող «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ն (այսուհետ՝ Կենտրոն) իրականացնում է միայն մակերևութային ջրերի (քանակական և որակական բնութագրերի), մթնոլորտային օդի աղտոտվածության որոշում և գնահատում և ստացված տեղեկատվությունը ներկայացնում է ամենամսյա և տարեկան տեղեկանքների ձևով: Պարադոքսալ է այն, որ ՀՀ կառավարությունը չի ընդունել միայն այս երկու ռեսուրսների մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման իրականացման կարգը սահմանող որոշումներ:

ՀՀ-ում մոնիթորինգի գործող համակարգը ԽՍՀՄ փլուզումից հետո խեղաթյուրվել է և տեխնիկական ապահովվածությամբ զիջում է Խորհրդային Հայաստանի

համակարգին: Սկսած 2004-2005-ական թվականներից՝ իրավիճակը շտկվում է, Կենտրոնն աստիճանաբար տեխնիկապես հագեցվում է, ինչը հնարավորություն կընձեռի իրականացնելու լիարժեք մոնիթորինգ<sup>22</sup>:

Իրականացման փուլում է գտնվում ՄԱԶԾ/ԳԷՀ «Տեղեկատվության և մոնիթորինգի համակարգի օպտիմալացման նպատակով ինստիտուցիոնալ և իրավական ներուժի հզորացումը Հայաստանում՝ գլոբալ բնապահպանական կառավարման համար» ծրագիրը, որի նպատակն է ներդնել շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կառավարման ազգային համակարգ<sup>23</sup>: Ծրագրի ընթացիկ արդյունքների ուսումնասիրությունը և անմիջական մասնակցությունը դրան թույլ են տալիս արձանագրելու, որ օրենսդրական կարգավորման ոլորտում առաջարկվող փոփոխությունները չեն համապատասխանում գիտական մոտեցումներին, ուստի չեն կարող պատշաճ հիմք հանդիսանալ համակարգի ձևավորման համար:

Նույնիսկ գործնական ոլորտի թերզարգացվածության պայմաններում իրավական կարգավորման առաջարկվող փոփոխությունները պետք է պատշաճ ելակետ լինեն հարաբերությունների հետագա զարգացման համար:

Կառավարման մարմինների համար զարգացման ուղենիշ պետք է ծառայի նաև շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու և տարածելու ամբողջ աշխարհում գործող (Արևմտյան և Արևելյան Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա, Ավստրալիա, Ասիա) ժամանակակից ամենաարդյունավետ համակարգը՝ աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրը (միջազգայնորեն ճանաչված հապավումն է՝ PRTR)<sup>24</sup>: Այն հանրությանը մատչելի ռեգիստր է, որը ներառում է ձեռնարկություններից դեպի մթնոլորտային օդ, ջրեր և հողեր կատարվող արտանետումների, արտահոսքերի, ինչպես նաև աղտոտիչների՝ մեկ ձեռնար-

կությունից դեպի մեկ այլ ձեռնարկություն տեղափոխման վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն<sup>26</sup>: Թեև ՀՀ չի վավերացրել «Աղտոտիչների արտամետման և տեղափոխման ռեգիստրների մասին», սակայն դրա ներդրման նախադրյալները կսկսեն ձևավորվել «Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն ընդունելուց հետո: Ինքնահսկման համակարգի ներդրմամբ իրավաբանական անձանց վրա դրվում է արտադրական գործընթացի և դրա ընթացքում առաջացած շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող աղտոտող նյութերի և օգտագործվող հումքի նկատմամբ ինքնահսկում իրականացնելու պարտականություն: Համաձայն Օրենքի նախագծի՝ ինքնահսկման միջոցով ստացվող տեղեկատվությունը պետք է զետեղված լինի տվյալ իրավաբանական անձի և լիազոր մարմնի ինտերնետային կայքերում:

Ներկայումս հանրապետությունում իրականացվում է հողային ռեսուրսների կադաստր և մասնակիորեն՝ անտառային ռեսուրսների կադաստր:

Բնական ռեսուրսների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն հավա-

քագրում և տարեգրքերում ամփոփում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրության ծառայությունը: Հաշվի առնելով մի շարք օբյեկտիվ պատճառներ՝ ՀՀ ԱՎԾ տրամադրած տեղեկատվությունը բավականին ընդհանուր է. օրինակ՝ հողային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունն ընդգրկում է տեղեկություններ միայն հողային տարածքի մասով, ընդերքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ծավալի և հորատանցքերի միջին խորության մասով<sup>26</sup>:

### **եզրակացություն**

Հայաստանի Հանրապետությունում բնական ռեսուրսների պետական կառավարման վերոգրյալ գործառույթների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում կատարելու ընդհանրացում, որն ուղղակիորեն կապված է կառավարման ամբողջ համակարգի գործառնման արդյունավետության հետ. կառավարչական որոշումներն ընդունվում են բնական ռեսուրսների և կառավարման օբյեկտների վարքագծի վերաբերյալ կցկտուր, սահմանափակ տեղեկատվության առկայությամբ, ինչը կանխորոշում է դրանց անարդյունավետ գործողությունը ընդունման իսկ պահից:

<sup>1</sup> Տե՛ս Ե.Վ. Цариценцева. Социологическая информация в контексте государственного управления// Теоретический журнал "Credo". М., 1999. // <http://credonew.ru/content/view/152/24>:

<sup>2</sup> Տե՛ս Գ.Վ. Атаманчук. Обеспечение рациональности государственного управления. М., 1990, էջ 173-174:

<sup>3</sup> Տե՛ս Shyam Kishor. Agarwal Environmental Monitoring, India, 2005, էջ 2:

<sup>4</sup> Տե՛ս Комментарий к Земельному Законодательству Российской Федерации. Отв. Ред. С.А. Боголюбов.-М.: 1998, էջ 256:

<sup>5</sup> Տե՛ս Bindu N. Lohani, J. Warren Evans, Robert R. Everitt, Harvey Ludwig, Richard A. Carpenter, Shih-Liang Tu Environmental impact assessment for developing countries in

Asia. Volume 1, Overview 1997, էջ 9-2:

<sup>6</sup> Տե՛ս Л.К. Терещенко. Доступ к информации: правовые гарантии. Журнал российского права, N 10, 2010, էջ 46:

<sup>7</sup> Տե՛ս О.Л. Дубовик. Экологическое право в вопросах и ответах. Учебное пособие.: -М.: 2004, էջ 100:

<sup>8</sup> Տե՛ս М.М. Бринчук. Экологическое право: Учебник.-2-е изд., перераб. и доп.-М., 2005, էջ 206:

<sup>9</sup> Ընդունվել է 24.10.2005թ., ուժի մեջ է մտել 17.12.2005թ., ՀՀՊՏ 2005.12.07/75(447):

<sup>10</sup> Ընդունվել է 03.04.2000թ., ուժի մեջ է մտել 12.05.2000թ., ՀՀՊՏ 2000.05.12/9(107):

<sup>11</sup> Ընդունվել է 23.11.1999թ., ուժի մեջ է մտել 27.12.1999թ., ՀՀՊՏ 1999.12.27/31(97):

**ՔԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ**

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

- <sup>12</sup> Ընդունվել է 27.11.2006թ., ուժի մեջ է մտել 04.01.2007թ., ՀՀՊՏ 2006.12.25/66(521):
- <sup>13</sup> Ընդունվել է 02.05.2001թ., ուժի մեջ է մտել 15.06.2001թ., ՀՀՊՏ 2001.06.15/17(149):
- <sup>14</sup> Ընդունվել է 04.06.2002թ., ուժի մեջ է մտել 10.10.2002թ., ՀՀՊՏ 2002.07.10/24(199):
- <sup>15</sup> Ընդունվել է 06.11.2002թ., ուժի մեջ է մտել 21.12.2002թ., ՀՀՊՏ 2002.12.11/54(229):
- <sup>16</sup> Ընդունվել է 11.10.1994թ., ստորագրվել է 01.11.1994թ., ՀՀԳԽՏ 1994/21:
- <sup>17</sup> Ընդունվել է 07.02.2001թ., ուժի մեջ է մտել 20.03.2001թ., ՀՀՊՏ 2001.03.20/9(141):
- <sup>18</sup> Ընդունվել է 15.02.2007թ., ուժի մեջ է մտել 24.03.2007թ., ՀՀՊՏ 2007.03.14/15(539):
- <sup>19</sup> Ընդունվել է 07.01.2008թ., ուժի մեջ է մտել 01.01.2009թ., ՀՀՊՏ 02.04.08./21(611):
- <sup>20</sup> Ընդունվել է 22.01.2009թ., ուժի մեջ է մտել ՀՀՊՏ 25.02.09./11(677):
- <sup>21</sup> Չնայած ՀՀ կառավարության վերոգրյալ որոշումներն ընդունվել են վերջին մի քանի տարիների ընթացքում, ՀՀ բնապահպանության

նախարարությունը նախապատասխանում է այդ որոշումներում և ՀՀ բնառեսուրսային օրենսդրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին իրավական ակտերի նախագծեր: Դրանց մշակումը անտրամաբանական է թվում հատկապես գործնական ոլորտի ուսումնասիրությունից հետո, երբ ի հայտ է գալիս իրավական պահանջների և իրականության միջև գոյություն ունեցող «բացասական տարբերությունը»:

- <sup>22</sup> <http://www.armmonitoring.am/>
- <sup>23</sup> <http://www.envinfo-gef.am>
- <sup>24</sup> <http://www.prtr.net/en/links/>
- <sup>25</sup> St'u Guidance on Implementation of the Protocol on Pollutant Release and Transfer Registers. United Nations, New York, Geneva 2008, էջ 2-3 (105):
- <sup>26</sup> Ավելի մանրամասն տես Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2010, էջ 209-222// [www.armstat.am](http://www.armstat.am)

---

## ON THE ISSUE OF THEORETICAL BASIS OF STATE GOVERNANCE OF NATURE RESOURCES

**Gor MOVSISYAN**

Post graduate student  
YSU, Chair of Civil Procedure

---

The presented article, dedicated to the theoretical basis of state governance of nature resources, argues some scientific problems of the genesis of Environmental law and its scientific status within the system of jurisprudence. The

article explores possible paths to overcome the impediments related to the theoretical notions (*corpus scientiarum*) within the institute of state governance of nature resources.

The paper concludes the scientific material of jurisprudence (as well as science of environmental law) and theoretical comprehension of empirical material will be origins to solve abovementioned problems of science of Environmental law.

---